[184590]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» հունվար 2016 թ. N 62-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի թիվ 337-Ն որոշման 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին (այսուհետ՝ նախարար) կից հասարակական խորհրդի անդամների առավելագույն թվաքանակը՝ 20:

2. Հաստատել նախարարին կից հասարակական խորհրդի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանը երկօրյա ժամկետում հրապարակել նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն հրամանը հանձնել (ուղարկել) նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար դիմում ներկայացրած իրավաբանական և ֆիզիկական անձանց:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի խորհրդական Ա. Սավգուլյանին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության աշխատանքի

և սոցիալական հարցերի նախարարի

«03» հունվար 2016թ. N 62-Ա հրամանի

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Խորհրդի նախագահ՝

1. Արտեմ Ասատրյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Խորհրդի անդամներ՝

2. Թամարա Աբրահամյան - «Արազա» ԲՀԿ
3. Սուսաննա Թադևոսյան - «Հույսի կամուրջ» ՀԿ
4. Լալա Հուսիկի Տեր-Ղազարյան - «Պանորամա ԷՅՄ» ՍՊԸ (լրատվական կայք)
5. Մարիետա Թեմուրյան - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
6. Էդուարդ Կիրակոսյան - «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
7. Միրա Անտոնյան - «Երեխաների պաշտպանության ցանց» ոչ առևտրային ԻԱՄ
8. Արթուր Սարգսյան - «Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակ» ՀԿ

9. Արմինե Մուքոյան - «Հայ օգնության միություն» ԲՀԿ
10. Արսեն Աբրահամյան - «Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
11. Քրիստինա Գևորկյան - «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
12. Նաիրա Առաքելյան - «Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
13. Տիգրան Պետրոսյան -«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
14. Աշոտ Քոչարյան - «Սոս մանկական գյուղեր» ԲՀԿ
15. Աիդա Մուրադյան «Վոլդ Վիժն Ինթերնեշնլ» Միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ
16. Աննա Եղիազարյան - «Հայկական կարմի խաչ ընկերություն» ՀԿ
17. Արսեն Ստեփանյան - «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ»-ի Հայաստանյան ներկայացուցչություն
18. Արայիկ Հայրապետյան
19. Աննա Մնացականյան
20. Սյուզաննա Բաղդյան